

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՄՓՈՓ
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

Հաշվետվության բովանդակությունը		Էջը
1.	ՀՀ կրթության պետական տեսչության 2015 թվականի գործունեությունը	1
2.	Ստուգումներ	6
	2.1. Հանրակրթություն 2.2. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն	11
3.	Ուսումնասիրություններ	15
	3.1. Հանրակրթություն	20
	3.2. ՀՀ Արագածոտնի, Վայոց ձորի մարզպետարանների աշխատակազմերի կրթության, մշակույթի և սպորտի վարչություններ 3.3. ՀՀ Արարատի մարզի Արարատի, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի, ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի քաղաքապետարանների աշխատակազմերի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներ	22
4.	Դիտարկումներ	25
5.	Մշտադիտարկում	26
6.	Դիմումներ, բողոքներ: Ուսումնասիրություններ ՀՀ մարզերում և Երևան քաղաքում	27
7.	Խրախուսանքներ և կարգապահական տույժեր	30

1. ՀՀ կրթության պետական տեսչության 2015 թվականի գործունեությունը

ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչությունը (այսուհետ՝ Տեսչություն) գործում է «Կրթության պետական տեսչության մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ կրթության և գիտության նախարարության կանոնադրության և իր կանոնադրության հիման վրա:

Տեսչությունն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է ՀՀ Սահմանադրությամբ, «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Նախնական և միջին մասնագիտական կրթության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ աշխատանքային օրենսգրքով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, այլ իրավական ակտերով:

Տեսչությունն իր գործունեությունն իրականացրել է՝ հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված տեսչության 2015թ. աշխատանքային ծրագիրը և Տեսչության պետի՝ ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի, կողմից հաստատված

ստուգումների ժամանակացույցը՝ ելնելով Տեսչության գործունեության հետևյալ հիմնական սկզբունքներից.

- ✓ մարդու և քաղաքացու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության առաջնահերթություն.
- ✓ գործունեության օրինականություն, թափանցիկություն և հրապարակայնություն.
- ✓ կրթության բնագավառի օրենսդրության միատեսակ և անկողմնակալ կիրառման ապահովում.
- ✓ ծրագրային գործողությունների իրականացում՝ ըստ գերակա ուղղությունների և առաջնայնությունների.
- ✓ կրթության որակի ապահովում տարածքային կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և ուսումնական հաստատությունների հետ համագործակցելու և օժանդակելու միջոցով:

Իրականացվող գործընթացների թափանցիկությունն ապահովելու նպատակով Տեսչությունում գործում է համակարգչային ներքին ցանց, որտեղ զետեղված տեղեկատվությունը մատչելի է բոլոր տեսուչների համար:

Տեսուչների մասնակցությամբ պարբերաբար տեղի են ունենում բաց քննարկումներ, խորհրդակցություններ, զեկույցներ, սեմինարներ:

Գործողություններ

Տեսչության կողմից 2015 թվականի ընթացքում իրականացված ստուգումների, ուսումնասիրությունների և մշտադիտարկումների արդյունքների հիման վրա կազմվել են՝

- ✓ **հաշվետվություններ,**
- ✓ **վերլուծություններ,**
- ✓ **ակտեր,**
- ✓ **արձանագրություններ,**
- ✓ **տեղեկանքներ,**
- ✓ **եզրակացություններ,**
- ✓ **զեկուցագրեր,**
- ✓ **զեկույցներ,**
- ✓ **գրություններ:**

Բացահայտված խախտումների հետևանքների և թերությունների վերացմանն ուղղված կամ ուսումնական հաստատության զարգացմանը նպաստող՝ **կատարման համար պարտադիր հանձնարարականներ են տրվել** ուսումնական հաստատությունների կառավարման մարմիններին (տնօրեններին և խորհուրդների նախագահներին), ինչպես նաև, ըստ ուսումնական հաստատությունների ենթակայության, **առաջարկություններ են ներկայացվել** լիազորված պետական և (կամ) տեղական ինքնակառավարման մարմիններին, ուսումնական հաստատությունների հիմնադիրներին:

2015թ. Տեսչությանը հասցեագրվել է 292 (մտից) գրություն (2014թ.՝ 334, 2013թ.՝ 366, 2012թ.՝ 393), որից 19-ը կազմել են քաղաքացիների դիմումներն ու բողոքները (2014թ.՝ 26, 2013՝ 34, 2012 թ.՝ 67):


Տեսչության ելից գրությունների թիվը կազմել է 262 (2014՝ 461, 2013՝ 357, 2012՝ 293):

Տեսչության պետն իր իրավասության սահմաններում արձակել (տվել) է՝
 44 կարգադրություն,
 13 ստուգման հանձնարարագիր,
 կատարման համար պարտադիր 132 հանձնարարական:

Գրություններ (զեկուցագրեր) են ուղարկվել՝

ՀՀ կառավարության աշխատակազմ	11
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	77
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	1
ՀՀ արդարադատության նախարարություն	1
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	1
ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն	5
ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին	1
ՀՀ մարզպետարաններ	15
ՀՀ գլխավոր դատախազություն	1
Երևանի քաղաքապետարան	4
Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջան	1
ՀՀ Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետարան	1
ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի քաղաքապետարան	1
ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի քաղաքապետարան	1
ՀՀ Սյունիքի մարզի Կապանի քաղաքապետարան	1
Կրթության ազգային ինստիտուտ	3
ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողով	1
Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն	1
ՀՀ բուհերի ռեկտորներին	14
Ուսումնական հաստատությունների տնօրեններին	110
Երևան քաղաքի քննչական վարչություն	1
ՀՀ Ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Գորիսի բաժին	1
Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ	2
Քաղաքացիների	7
Ընդամենը	263

Տեսչության կողմից իրականացրած ուսումնասիրությունների և ստուգումների աշխարհագրական բաշխվածությունը.



- 1 Ստուգումներ ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում,
- 2 Ստուգումներ ՀՀ երկրորդ և երրորդ աստիճանի հանրակրթական ծրագրեր իրականացնող թվով 26 ուսումնական հաստատություններում,
- 3 Ստուգումներ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող թվով 66 ուսումնադաստիարակչական հաստատություններում,
- 4 Կրթական գործունեության ուսումնասիրություններ ՀՀ Լոռու և ՀՀ Գեղարքունիքի մարզերի թվով 92 հանրակրթական ուսումնական հաստատություններում,
- 5 ՀՀ ավագ դպրոցների 12-րդ դասարաններում սովորողների պետական ավարտական քննությունների անցկացման և գրավոր աշխատանքների ստուգման ընթացքի ուսումնասիրություն,
- 6 Ուսումնասիրություն ՀՀ Արագածոտնի և ՀՀ Վայոց ձորի մարզպետարանների կրթության, մշակույթի և սպորտի վարչություններում,
- 7 Ուսումնասիրություններ ՀՀ Արարատի մարզի Արարատի, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի, ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի

8 Դիտարկումներ,

9 Մշտադիտարկումներ:

Գործունեության թափանցիկության, հաշվետվողականության և հրապարակայնության ապահովման նպատակով Տեսչությունը համագործակցել է գանգվածային լրատվամիջոցների հետ.

- ✓ Ուսումնասիրությունների արդյունքում կազմված վերլուծությունները, հաշվետվությունները (տեղեկանքները) հրապարակվել են «Կրթություն» շաբաթաթերթում և www.kpt.am կայքում:
- ✓ Տեսչության 2015թ. տարեկան ստուգումների և աշխատանքային ծրագրերը, ամենամսյա գործողությունների ժամանակացույցները հրապարակվել են www.armedu.am և www.edu.am կայքերում:

Տեսչության կողմից իրականացված թեմատիկ ստուգումներից, տեսչավորումներից, ուսումնասիրություններից, մշտադիտարկումներից, դիտարկումներից բացի՝ իրականացվել են նաև հետևյալ գործողությունները

N	Աշխատանքի անվանումը	Նպատակը
1.	Կազմվել է Տեսչության 2014թ. տարեկան հրապարակային հաշվետվությունը և ներկայացվել հրապարակման:	«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջի կատարում
2.	Կազմվել են Տեսչության 2015թ. կիսամյակային հաշվետվությունը և տարեկան հաշվետվության նախագիծը: Կիսամյակային հաշվետվությունը հրապարակվել է:	«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջի կատարում
3.	Կազմվել է Տեսչության 2016թ. աշխատանքային ծրագիրը: Ծրագիրը հաստատվել է ՀՀ ԿԳ նախարարի կողմից:	«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջի կատարում
4.	I և II կիսամյակներում կազմվել և հրապարակման է ներկայացվել կրթության բնագավառում առկա վիճակի, դրա առանձին բնութագրիչների, կրթության ցուցանիշերի մասին հաշվետվություն:	«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի կատարում
5.	I և II կիսամյակներում կազմվել և հրապարակման են ներկայացվել ուսումնական հաստատությունների կրթական ծառայությունների արդյունավետության գնահատման, գործունեության մասին վերլուծություններ:	«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի կատարում

2. Ստուգումներ

N	Ուսումնական հաստատությունը	Ստուգման առարկան
1.	ՀՀ մարզերի նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող թվով 22 ուսումնադաստիարակչական հաստատություններ	Ստուգումներ՝ ուսումնական հաստատությունների կրթական գործունեության ռիսկայնությունը վերլուծելու, գնահատելու, ինչպես նաև տվյալների բազա ձևավորելու նպատակով (հիմք՝ ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչության» ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը և ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» N 598-Ն որոշումը):
2.	Երևանի Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող թվով 44 ուսումնադաստիարակչական հաստատություններ	
3.	ՀՀ երկրորդ և երրորդ աստիճանի հանրակրթական ծրագրեր իրականացնող թվով 26 ուսումնական հաստատություններ	
4.	Երևանի N 8 և Մարալիկի, Արովյանի հ. 1 արհեստագործական պետական ուսումնարաններ	

2.1. Հանրակրթություն

1) Ստուգումներ ՀՀ մարզերի նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող թվով 22 ուսումնադաստիարակչական հաստատություններում

2015թ. մայիսի 11-27-ը ՀՀ Արարատի մարզի Արարատի, Գեղարքունիքի մարզի Գավառի, Տավուշի մարզի Դիլիջանի, Սյունիքի մարզի Գորիսի ընդհանուր թվով 22 նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների կրթական գործունեության ռիսկայնությունը վերլուծելու, գնահատելու, ինչպես նաև տվյալների բազա ձևավորելու նպատակով իրականացվել են ստուգումներ:

Ստուգումների արդյունքում 22 նախադպրոցական ուսումնական հաստատություններից 21-ում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 21 ակտ: Խախտումներ չեն արձանագրվել ՀՀ Արարատի մարզի «Արարատցեմենտ» ՓԲԸ-ի մանկապարտեզում:

Համաձայն «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ մանկապարտեզների տնօրեններին ստուգման արդյունքում հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու նպատակով տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ: Մանկապարտեզներում իրականացված ստուգումների արդյունքների ամփոփ պատկերը ներկայացվել է ՀՀ կրթության պետական տեսչության 2015թ. առաջին կիսամյակի գործունեության վերաբերյալ հաշվետվությունում (www.kpt.am):

Հեղադարձ կապ

Մանկապարտեզների տնօրեններից ստացված կատարողականների և հանձնարարականների համադրման արդյունքները ներկայացվում են ստորև.

Հանձնարարականի բնույթը	Հանձնարարականը կատարած ուսումնական հաստատությունը	Հանձնարարականը չկատարած ուսումնական հաստատությունը
Խմբերում սաների թիվը համապատասխանեցնել սահմանված նորմատիվներին	Արարատի հ.1 մանկապարտեզ, Արարատի հ.2 մանկապարտեզ, Դիլիջանի հ.1 մանկապարտեզ, Դիլիջանի հ.2 մանկապարտեզ, Գավառի հ. 5 մանկապարտեզ, Գորիսի հ. 1 մանկապարտեզ, Գորիսի հ. 3 մանկապարտեզ, Գորիսի հ. 6 մանկապարտեզ	Գորիսի հ. 2 մանկապարտեզ (ընթացքի մեջ է)
Հաստատությունում խմբերը ձևավորելիս հաշվի առնել երեխաների տարիքային առանձնահատկությունները	Դիլիջանի հ.1 մանկապարտեզ, Դիլիջանի հ.2 մանկապարտեզ, Դիլիջանի հ.3 մանկապարտեզ, Դիլիջանի հ.6 մանկապարտեզ, Գորիսի հ. 2 մանկապարտեզ	
Սահմանված կարգով ձևավորել երեխաների համակազմը, ապահովել նրանց սոցիալական պաշտպանվածությունը, ինչպես նաև հաստատությունում ճիշտ գործավարության իրականացման պայմանները	Դիլիջանի հ. 6 մանկապարտեզ, Գորիսի հ. 2 մանկապարտեզ, Գորիսի հ. 3 մանկապարտեզ, Գորիսի հ. 7 մանկապարտեզ	
Հաստատությունում նախադպրոցական կրթությունը իրականացնել համապատասխան կրթական ծրագրերով	Դիլիջանի հ. 6 մանկապարտեզ	
Ապահովել միջին և ավագ խմբերի կրթական համալիր ծրագրերի պահանջների կատարումը		
Միջոցներ ձեռնարկել մանկապարտեզի գործունեության լիցենզիա ձեռք բերելու ուղղությամբ		Արարատի հ. 1 մանկապարտեզ, Արարատի հ. 2 մանկապարտեզ, Արարատի հ. 3 մանկապարտեզ, Գավառի հ. 4 մանկապարտեզ, Գավառի հ. 5 մանկապարտեզ, Գավառի հ. 7 մանկապարտեզ, (ընթացքի մեջ է)
Հաստատության կանոնադրությունը համապատասխանեցնել համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության պահանջներին	Գավառի հ. 5 մանկապարտեզ, Գավառի հ. 7 մանկապարտեզ, Գորիսի հ. 1 մանկապարտեզ, Գորիսի հ. 2 մանկապարտեզ , Գորիսի հ. 3 մանկապարտեզ, Գորիսի հ. 4 մանկապարտեզ, Գորիսի հ. 5 մանկապարտեզ, Գորիսի հ. 6 մանկապարտեզ, Գորիսի հ. 7 մանկապարտեզ	Գավառի հ. 4 մանկապարտեզ, (ընթացքի մեջ է)

Հաստատության անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականում կատարել համապատասխան փոփոխություն	Գավառի հ. 7 մանկապարտեզ,	
Մշակել և ներդնել հաստատության ներքին կարգապահական կանոնները	Գավառի հ. 4 մանկապարտեզ, Գավառի հ. 5 մանկապարտեզ,	
Հաստատության հաստիքացուցակը համապատասխանեցնել օրինակելի հաստիքացուցակի պահանջներին	Գավառի հ. 4 մանկապարտեզ, Գավառի հ. 5 մանկապարտեզ, Գավառի հ. 7 մանկապարտեզ,	Գորիսի հ. 1 մանկապարտեզ, Գորիսի հ. 3 մանկապարտեզ, Գորիսի հ. 7 մանկապարտեզ (ընթացքի մեջ է), Գորիսի հ. 2 մանկապարտեզ , Գորիսի հ. 6 մանկապարտեզ
Դաստիարակի պաշտոնում նշանակել համապատասխան որակավորում ունեցող անձի:	Արարատի հ.2 մանկապարտեզ, Դիլիջանի հ.1 մանկապարտեզ, Գավառի հ. 4 մանկապարտեզ, Գավառի հ. 5 մանկապարտեզ,	Դիլիջանի հ.4 մանկապարտեզ, Դիլիջանի հ.6 մանկապարտեզ
Օտար լեզվի մանկավարժի պաշտոնում նշանակել համապատասխան որակավորում ունեցող անձի:	Դիլիջանի հ. 2 մանկապարտեզ	
Պարուսույցի պաշտոնում նշանակել համապատասխան որակավորում ունեցող անձի		Դիլիջանի հ. 3 մանկապարտեզ
Ֆիզկուլտուրայի հրահանգչի պաշտոններում նշանակել համապատասխան որակավորում ունեցող անձի		Դիլիջանի հ. 4 մանկապարտեզ
Միջոցներ ձեռնարկել՝ մանկապարտեզի մեթոդիստի պաշտոնեական պարտականությունների պատշաճ կատարումն ապահովելու ուղղությամբ	Արարատի հ. 2 մանկապարտեզ	
Խմբասենյակներում ստեղծել կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունավետության բարձրացմանը նպաստող զարգացնող միջավայր	Դիլիջանի հ. 3 մանկապարտեզ	Դիլիջանի հ. 4 մանկապարտեզ, Դիլիջանի հ. 5 մանկապարտեզ, Դիլիջանի հ. 6 մանկապարտեզ, Գավառի հ. 4 մանկապարտեզ, (ընթացքի մեջ է)
Ապահովել երեխաների անձնական պարագաների սանիտարական պահպանումը	Գավառի հ. 5 մանկապարտեզ	
Ապահովել մանկավարժական համակազմի վերապատրաստման գործընթացի իրականացումը		Գավառի հ. 4 մանկապարտեզ, Գավառի հ. 7 մանկապարտեզ, (ընթացքի մեջ է)

2) Ստուգումներ Երևանի Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների թվով 44 նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնադաստիարակչական հաստատություններում

2015թ. նոյեմբերի 2-ից դեկտեմբերի 18-ը - 8 - Երևանի Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ

վարչական շրջանների նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող թվով 44 (22-ական) ուսումնադաստիարակչական հաստատություններում իրականացվել են ստուգումներ՝ կրթական գործունեության ռիսկայնությունը վերլուծելու, գնահատելու, ինչպես նաև տվյալների բազա ձևավորելու նպատակով:

Ստուգումների արդյունքում Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի մանկապարտեզներից 18-ում, Շենգավիթ վարչական շրջանի մանկապարտեզներից 21-ում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 39 ակտ: Հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու նպատակով ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի կողմից մանկապարտեզների տնօրեններին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ (թվով 39):

Մանկապարտեզների կրթական գործունեության ռիսկերը՝ ըստ ստուգաթերթերի ամփոփ տվյալների (աղյուսակ 1):

աղյուսակ 1

h/h	Մանկապարտեզի կրթական գործունեության ռիսկն ըստ ստուգաթերթերի (միավոր)	Մանկապարտեզի անվանումը
1.	0 (խախտումներ չեն արձանագրվել)	Երևանի հ.հ. 78, 89, 90, 96, 126 մանկապարտեզներ
2.	1	Երևանի հ.հ. 79, 87, 88, 91, 92, 93, 97, 141 մանկապարտեզներ
3.	2	Երևանի հ.հ. 76, 83, 94, 128, 129, 130, 132, 134, 136, 138, 140, 142, 143, 144, 145 մանկապարտեզներ
4.	3	Երևանի հ. 85, 133 մանկապարտեզներ
5.	3,5	Երևանի հ.հ. 77, 86, 139 մանկապարտեզներ
6.	4,5	Երևանի հ.հ. 80, 95, 127, 135, 146, 147 մանկապարտեզներ
7.	5	Երևանի հ. 137 մանկապարտեզ
8.	6	Երևանի հ. 81 մանկապարտեզ
9.	7	Երևանի հ. 82 մանկապարտեզ
10.	7,5	Երևանի հ. 131 մանկապարտեզ
11.	14,5	Երևանի հ. 84 մանկապարտեզ

Ստուգումների արդյունքում արձանագրվել են հետևյալ բնույթի խախտումներ (աղյուսակ 2).

աղյուսակ 2

խախտման բնույթը	Նշված բնույթի խախտում կատարած մանկապարտեզների ընդհանուր թիվը (տոկոսը)	Մանկապարտեզի համարը
Մանկապարտեզը չունի նախադպրոցական կրթական ծրագիր իրականացնելու լիցենզիա	36 (81%)	Երևանի հ. հ. 76, 77, 79, 80, 81, 82, 83, 84, 85, 86, 88, 92, 93, 94, 95, 97, 127, 128, 129, 130, 131, 132, 134, 135, 136, 137, 138, 139, 140, 141, 142, 143, 144, 145 146, 147 մանկապարտեզներ

Մանկապարտեզների հաստիքացուցակով և պաշտոնային դրույքաչափերով մանկավարժական աշխատողներին հատկացվել են սահմանված նորմից պակաս հաստիքային միավոր կամ ընդհանրապես չեն հատկացվել	36 (81%)	Երևանի հ.հ. 76, 77, 79, 80, 82, 83, 84, 85, 86, 87, 88, 91,92, 93, 94, 95, 97, 127, 128, 129, 130, 131, 132, 133, 134, 135, 136, 137, 138, 140, 142, 143, 144, 145, 146, 147 մանկապարտեզներ
Տնօրենը և (կամ) մեթոդիստը, լրացուցիչ կրթության մանկավարժները պատշաճ կերպով չեն իրականացրել իրենց պաշտոնային պարտականությունները	2 (5%)	Երևանի հ.հ. 84, 131 մանկապարտեզներ
Մանկավարժական աշխատողների ընտրություն և նշանակում	10 (23%)	Երևանի հ.հ. 77, 80, 81, 82, 95, 127, 131, 139, 146, 147 մանկապարտեզներ
Մանկավարժական կազմի ներկայացուցիչները վերջին 5 տարիների ընթացքում չեն վերապատրաստվել	4 (9%)	Երևանի հ.հ. 81, 84, 86, 135 մանկապարտեզներ
Չեն պահպանվել պարապմունքների անցկացման ժամանակացույցի կազմմանը, ինչպես նաև ծրագրային նյութին ներկայացվող պահանջները	3 (7%)	Երևանի հ.հ. 86, 131, 135 մանկապարտեզներ
Խմբերի գերբեռնվածություն	30 (68%)	Երևանի հ.հ. 76, 77, 80, 81, 82, 83, 86, 94, 95, 127, 128, 129, 130, 131, 132, 133, 134, 135, 136, 137, 138, 139, 140, 141, 142, 143, 144, 145, 146, 147 մանկապարտեզներ
Մանկապարտեզի խմբերում ընդգրկված են երեխաներ, ովքեր չեն համապատասխանում տվյալ տարիքային խմբին	8 (18%)	Երևանի հ. հ. 80, 82, 85, 88, 133, 136, 137, 139 մանկապարտեզներ
Տնօրենի հրամանով ազատված երեխաները հաճախում են մանկապարտեզ, ներկա են խմբում	1 (2%)	Երևանի հ. 82 մանկապարտեզ (2)
Դպրոցահասակ երեխա	1 (2%)	Երևանի հ. 135 մանկապարտեզ (1)
Շարժի մատյանի վարման կարգ	3 (7%)	Երևանի հ. հ. 81, 82, 86 մանկապարտեզներ
Չեն տրամադրվել ստուգման ժամանակահատվածում ընդգրկվող որոշ փաստաթղթեր	1(2%)	Երևանի հ. 82 մանկապարտեզ (2013-2014, 2014-2015 ուսումնական տարիների միջին և ավագ խմբերի երեխաների հաճախումների հաշվառման մատյանները. նախորդ տնօրենի պաշտոնավարման ընթացքում)

Ստուգումների արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարին, Երևանի քաղաքապետին:

Խախտումների վերաբերյալ ամփոփ տեղեկանքը հրապարակվել է www.kpt.am կայքում:

Հեղադարձ կապ

Հանձնարարականները և դպրոցներից ստացված կատարողականները ամփոփման փուլում են:

Համաձայն Երևանի քաղաքապետի տեղակալից ստացված գրության՝ մանկապարտեզների

տնօրեններին տրվել են հանձնարարականներ, որոնց կատարումն ընթացքի մեջ է:

3) Ստուգումներ ՀՀ երկրորդ և երրորդ աստիճանի հանրակրթական ծրագրեր իրականացնող թվով 26 ուսումնական հաստատություններում

2015 թվականի փետրվարի 9-16-ը և մարտի 2-27-ը ՀՀ երկրորդ և երրորդ աստիճանի հանրակրթական ծրագրեր իրականացնող թվով 26 ուսումնական հաստատություններում իրականացվել են ստուգումներ:

Ստուգումների արդյունքում 26 դպրոցներից 17-ում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 17 ակտ: Հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու նպատակով ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի կողմից տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ. տնօրեններին՝ 17, կառավարման խորհուրդների նախագահներին՝ 4: Իրականացված ստուգումների արդյունքների ամփոփ պատկերը ներկայացվել է ՀՀ կրթության պետական տեսչության 2015թ. առաջին կիսամյակի գործունեության վերաբերյալ հաշվետվությունում (www.kpt.am):

Ստուգումների արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարին, լիազոր մարմինների ղեկավարներին և համապատասխան բուհերի ղեկավարներին: Խախտումների վերաբերյալ ամփոփ տեղեկանքը հրապարակվել է www.kpt.am կայքում:

Հեղադարձ կապ

Դպրոցներից ստացվել են կատարողականի վերաբերյալ գրություններ: Հանձնարարականների և ստացված կատարողականների համադրման արդյունքները ներկայացվում են ստորև.

N	Ուսումնական հաստատություն	Հանձնարարական		Կատարողական	
		Դպրոցի տնօրենին	Դպրոցի կառավարման խորհրդին	Դպրոցի տնօրենից	Դպրոցի կառավարման խորհրդից
1.	ՀՀ պետական ճարտարագ. համալսարանի Երևանի ավագ դպրոց	6 կետ - 31.08.2015թ.	-	6 կետ - 09.11.2015թ.	-
2.	ԵՊՀ առընթեր Ա. Շահինյանի անվ. ֆիզիկամաթեմատիկական ավագ դպրոց	2 կետ - 06.09.2015թ.	-	1 կետ - 11.11.2016թ. (1-ին կետի կատարումն ընթացքի մեջ է)	-
3.	Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հանրակրթական ծրագրերի կենտրոն-հենակետային վարժարան	4 կետ - 30.03.2015թ.	-	4 կետ -25.03.2015	-
4.	Երևանի «Օլիմպոս» կրթահամալիր	1 կետ - 15.04.2015թ.	-	1 կետ - 14.04.2015թ.	-

5.	Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր	5 կետ – 22.04.2015թ.	-	4 կետ - 07.04.2015թ. (1-ին կետի կատարումն ընթացքի մեջ է)	-
6.	«Փոքր Միեր» կրթահամալիր	4 կետ – 30.04.2015թ.	2 կետ - 29.05.2015թ.	2 կետ - 21.04.2015թ. (1-ին և 4-րդ կետերի կատարումն ընթացքի մեջ է)	2 կետ - չի ուղարկվել
7.	ՀՀ ԿԳՆ «Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտակ. առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոց»	2 կետ – 31.08.2015թ.	-	2 կետ - 11.11.2015թ.	-
8.	ՀՀ ԿԳՆ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտ» ՊՈԱԿ-ի հենակետային վարժարան	2 կետ – 31.08.2015թ.	-	2 կետ – 27.08.2015թ.	-
9.	ՀՀ ԿԳՆ «Գյումրու ակադեմ. վարժարան»	2 կետ - 15.09.2015թ.	3 կետ - 15.09.2015թ.	1 կետ - 07.09.2015 (1-ին կետի կատարումն ընթացքի մեջ է)	3 կետ - 07.09.2015թ.
10.	«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի ավագ դպրոց	2 կետ - 06.05.2015թ.	-	2 կետ - 06.05.2015թ.	-
11.	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Գյումրու մասնաճյուղի ավագ դպրոց	2 կետ – 31.08.2015թ.	-	1 կետ - 18.09.2015թ. (2-րդ կետի կատարումն ընթացքի մեջ է)	-
12.	ՀՀ ԿԳՆ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի Գյումրու մասնաճյուղի հենակետային վարժարան	3 կետ - 17.09.2015թ.	-	2 կետ - 16.09.2015թ. (1-ին կետի կատարումն ընթացքի մեջ է)	-
13.	ՀՀ ԿԳՆ Գյումրու «Ֆոտոն» վարժարան	4 կետ – 17.09.2015թ.	-	3 կետ - 16.09.2015թ. (1-ին կետի կատարումն ընթացքի մեջ է)	-
14.	ՀՀ Տավուշի մարզի Բերդի վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն	10 կետ – 22.09.2015թ.	2 կետ – 22.09.2015թ.	10 կետ – 22.09.2015թ.	2 կետ – 22.09.2015թ.
15.	ՀՀ Տավուշի մարզի Իջևանի վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն	6 կետ – 22.09.2015թ.	-	5 կետ – 18.09.2015թ. (2-րդ կետի կատարումն ընթացքի մեջ է)	-

16.	ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի քաղաքային պետական հանրակրթական վարժարան	1 կետ - 30.04.2015թ.	-	2ի կատարվել- 17.04.2015թ.	-
17.	ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի քաղաքային պետական հանրակրթական վարժարան	7 կետ - 15.05.2015թ.	4 կետ - 15.05.2015թ.	6 կետ - 30.04.2015թ.	4 կետ - 30.04.2015թ.

2.2. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն

Ստուգումներ Երևանի հ. 8, Մարալիկի, Աբովյանի հ. 1 արհեստագործական պետական ուսումնարաններում

2015 թվականի մարտի 23-ից ապրիլի 4-ը Երևանի հ. 8, նոյեմբերի 16-ից դեկտեմբերի 7-ը Աբովյանի հ. 1 և Մարալիկի պետական արհեստագործական ուսումնարաններում կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման, պետական կրթական չափորոշիչների կիրառման, կրթության իրավունքի, կրթական համակարգի սոցիալական երաշխիքների, կրթության որակի բարձրացման և կրթական ծրագրերի յուրացման ապահովման, ինչպես նաև կրթական ծրագրերի իրականացման արդյունավետության գնահատման, կրթության որակի ապահովման նկատմամբ պետական վերահսկողության նպատակով իրականացվել են տեսչական ստուգումներ: Ստուգումների արդյունքում ուսումնական հաստատություններում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 3 ակտ: Հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու նպատակով ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի կողմից տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ: Երևանի հ. 8 արհեստագործական պետական ուսումնարանում իրականացված ստուգման արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության պետական տեսչության 2015թ. առաջին կիսամյակի գործունեության վերաբերյալ հաշվետվությունում:

Ըստ ստուգաթերթերի ամփոփ տվյալների՝ ուսումնարանների կրթական գործունեության ռիսկերն ունեն հետևյալ պատկերը (աղյուսակ 1).

աղյուսակ 1

h/h	Ուսումնարանի կրթական գործունեության ռիսկն ըստ ստուգաթերթերի (միավոր)	Ուսումնական հաստատության անվանումը
1.	6	Աբովյանի հ. 1 արհեստագործական պետական ուսումնարան
2.	9	Երևանի հ. 8 արհեստագործական պետական ուսումնարան
3.	18,5	Մարալիկի արհեստագործական պետական ուսումնարան

Ստուգումների արդյունքում արձանագրվել են հետևյալ բնույթի խախտումներ (աղյուսակ 2).

աղյուսակ 2

Խախտման բնույթը	Ուսումնական հաստատության անվանումը
Մանկավարժական աշխատողների ընտրություն և նշանակում:	Աբովյանի հ. 1 ա/ու (2), Մարալիկի ա/ու (5)
Ուսումնական հաստատությունում 2013-2014, 2014-2015 ուսումնական տարիների ստուգողական /թեմատիկ/ աշխատանքները պահպանվել են ոչ ամբողջությամբ:	Աբովյանի հ. 1 ա/ու
Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին ուսանողների վերականգնման վերաբերյալ Լիազորված մարմին ներկայացված հաշվետվության մեջ չի նշվել ուսանողական իրավունքի վերականգնման հիմքը, կրթական ծրագիրը, կիսամյակը, ուսուցման ձևը, մասնագիտությունը:	Աբովյանի հ. 1 ա/ու
Ուսումնական տարվա ավարտին պետական կառավարման լիազոր մարմին ներկայացված ուսանողների տեղափոխման վերաբերյալ հաշվետվության մեջ չի նշվել տեղափոխման հիմքը, կրթական ծրագիրը, ուսուցման ձևը, մասնագիտությունը:	Աբովյանի հ. 1 ա/ու
Պարտադիր գինվորական ծառայությունից զորացրված թվով երկու սովորողներ տնօրենի հրամանով վերականգնվել են ուսումնական հաստատություն նախատեսված ժամկետից ուշ:	Աբովյանի հ. 1 ա/ու
Մասնագիտությունը լիցենզավորվել է ոչ համապատասխան մասնագիտական որակավորմամբ (0515 «Հարդակիրառական արվեստ» մասնագիտությունը լիցենզավորվել է «Դերձակ-մոդելավորող» մասնագիտական որակավորմամբ, սակայն ուսուցումն իրականացվում է «Ասեղնագործող-ժանեկագործող» մասնագիտական որակավորմամբ):	Մարալիկի ա/ու
Ուսումնարանում չեն ապահովվել ՀՀ ԿԳ նախարարի հրամաններով հաստատված նախնական մասնագիտական (արհեստագործական) մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների պահանջները:	Մարալիկի ա/ու
Մասնագիտությունների ուսումնական պլանները չեն համապատասխանում փոփոխված պետական կրթական չափորոշիչներին:	Մարալիկի ա/ու
Մասնագիտության գծով չեն կնքվել արտադրական պրակտիկայի անցկացման պայմանագրեր:	Մարալիկի ա/ու
Դիմորդներից ընդունելության փաստաթղթերն ընդունվել են ընդունելության սահմանված ժամկետի խախտումով:	Մարալիկի ա/ու
Դիմորդների ընդունելության մրցույթն անցկացվել է սահմանված ժամկետի խախտումով:	Մարալիկի ա/ու
Կառավարման խորհուրդը չունի աշխատակարգ, նիստերը գումարում է սահմանված հաճախությանը ոչ համապատասխան, չի սահմանել գործող մանկավարժական խորհրդի և ուսումնամեթոդական մասնագիտական խորհուրդների կազմերը, իրավասությունները և գործունեության կարգերը:	Մարալիկի ա/ու

Ստուգումների արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարին: Տեսչական ստուգումների վերաբերյալ հաշվետվությունները հրապարակվել են www.kpt.am կայքում:

Հեղադարձ կապ

Երևանի հ. 8 արհեստագործական պետական ուսումնարանի տնօրենից ստացվել է տրված հանձնարարականի վերաբերյալ կատարողական: Ըստ ներկայացված կատարողականի՝ հանձնարարականը կատարված է:

3. Ուսումնասիրություններ

N	Հաստատությունը	Ուսումնասիրության առարկան
1.	ՀՀ Լոռու մարզի թվով 48 և ՀՀ Գեղարքունիքի մարզի թվով 44 հանրակրթական ուսումնական հաստատություններ	Կրթական գործունեության ուսումնասիրություն
2.	ՀՀ ավագ դպրոցներ	12-րդ դասարանների սովորողների պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման գործընթացի նկատմամբ վերահսկողություն
3.	ՀՀ Արագածոտնի և ՀՀ Վայոց ձորի մարզպետարանների կրթության, մշակույթի և սպորտի վարչություններ	Կրթության բնագավառի օրենսդրության պահպանման նկատմամբ պետական վերահսկողություն:
4.	ՀՀ Արարատի մարզի Արարատի, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի, ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի քաղաքապետարանների աշխատակազմերի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներ	

3.1. Հանրակրթություն

1) ՀՀ Լոռու մարզի թվով 48 և ՀՀ Գեղարքունիքի մարզի թվով 44 հանրակրթական ուսումնական հաստատությունների կրթական գործունեության ուսումնասիրություններ (2015թ. ապրիլի 6-ից մինչև 30-ը և սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 23-ը)

Ուսումնասիրությունների ընթացքում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել թվով 46 դպրոցներում (ՀՀ Լոռու մարզում՝ 27, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 19): Հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմվել է ընդհանուր թվով 46 արձանագրություն: Հայտնաբերված խախտումները և դրանց հետևանքները վերացնելու նպատակով ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի կողմից դպրոցների տնօրեններին և կառավարման խորհուրդների նախագահներին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ: ՀՀ Լոռու մարզում իրականացված ուսումնասիրության արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության պետական տեսչության 2015թ. առաջին կիսամյակի գործունեության վերաբերյալ հաշվետվությունում:

ՀՀ Գեղարքունիքի մարզի թվով 44 հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է.

Տնօրենը սահմանված կարգով չի իրականացրել մանկավարժական կադրերի ընտրությունը (համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի) դպրոցներից 14-ում՝ ընդհանուր թվով 27 խախտում (Նորատուսի հ. 1 մ/դ, Վաղաշենի մ/դ, Գավառի հ. 1 հ/դ, Գավառի հ. 8 մ/դ, Վարդաձորի մ/դ, Ն. Գետաշենի հ. 2 մ/դ (2), Վ. Գետաշենի հ. 1 մ/դ, Ծովակի մ/դ (2), Կարմիրգյուղի հ. 1 մ/դ (2), Սարուխանի հ. 2 մ/դ (2), Լիճքի մ/դ (3), Ծովագյուղի մ/դ (3), Մարտունու հ. 1 հ/դ (3), Երանոսի հ. 2 մ/դ (4)):

Խախտվել են ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգի պահանջները (Նորատուսի հ.1 մ/դ, Կարմիրգյուղի հ. 1 մ/դ, Վաղաշենի մ/դ, Վարդաձորի մ/դ, Սարուխանի հ. 2 մ/դ, Երանոսի հ. 2 մ/դ, Լիճքի մ/դ (2), Ծովագյուղի մ/դ (2), Կարճաղբյուրի մ/դ):

Ուսուցիչն ընդունվել է աշխատանքի՝ առանց ուսուցչի թափուր աշխատատեղը համալրելու համար մրցույթ հայտարարելու (Վ. Գետաշենի հ. 2 մ/դ, Կարմիրգյուղի հ. 1 մ/դ, Սարուխանի հ. 2 մ/դ, Մարտունու հ. 1 հ/դ (8)):

Դպրոցի տնօրենը չի կատարել աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև, տնօրենը մանկխորհրդի ներկայացմամբ չի հաստատել դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը (Վ. Գետաշենի հ. 2 մ/դ):

Կառավարման խորհուրդը՝

- հավանություն չի տվել դպրոցի զարգացման ծրագրին (Ակունքի մ/դ),
- վերահսկողություն չի իրականացրել ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման նկատմամբ (Վ. Գետաշենի հ. 2 մ/դ, Վաղաշենի մ/դ, Երանոսի հ. 2 մ/դ, Վ. Գետաշենի հ. 1 մ/դ, Ակունքի մ/դ),
- չի հաստատել իր աշխատակարգը (Վ. Գետաշենի հ. 2 մ/դ, Գավառի հ. 1 հ/դ, Վաղաշենի մ/դ, Վ. Գետաշենի հ. 1 մ/դ, Ակունքի մ/դ),
- չի հաստատել դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի կարգը (Վ.

Գետաշենի հ. 2 մ/դ, Ակունքի մ/դ, Կարճաղբյուրի մ/դ),

- նիստերը գումարել է սահմանված կարգի խախտումով (Վ. Գետաշենի հ. 2 մ/դ, Գավառի հ. 1 հ/դ),

- չի քննարկել ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները (Վ. Գետաշենի հ. 2 մ/դ, Վաղաշենի մ/դ, Վ. Գետաշենի հ. 1 մ/դ):

- խորհրդի կազմում ծնողական խորհրդի կողմից որպես անդամ առաջադրված անձը նշված դպրոցում ներկայումս սովորող երեխա չունի (Վ. Գետաշենի հ. 2 մ/դ):

- չի հաստատել ուսումնական հաստատության ներքին կարգապահական կանոնները (Վ. Գետաշենի հ. 2 մ/դ)

- չի քննարկել ներքին գնահատման արդյունքները (Վաղաշենի մ/դ, Երանոսի հ. 2 մ/դ, Վ. Գետաշենի հ. 1 մ/դ, Ակունքի մ/դ),

- կառավարման խորհուրդը տնօրենի թափուր տեղի համար մրցույթ չի անցկացրել (Ծովագյուղի մ/դ, Ծովասարի մ/դ, Երանոսի հ. 1 մ/դ):

- կառավարման խորհրդի կողմից տնօրենի թափուր տեղի համար մրցույթի հայտարարությունը տրվել է սահմանված ժամկետի խախտումով (Երանոսի հ. 1 մ/դ, Ծովագյուղի մ/դ, Ծովասարի մ/դ):

- կառավարման խորհրդի կազմի փոփոխությունը կատարվել է սահմանված ժամկետի խախտումով (Ծովագյուղի մ/դ):

2015-2016 ուսումնական տարվա մանկավարժական խորհուրդը ձևավորվել է սահմանված կարգի խախտումով (Գավառի հ. 1 հ/դ):

